ԳՐԻԳՈՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱԶԳԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՅՈՒՍ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները, որպես միասնական համակարգի տարրեր, մշտական փոխկապակցության և փոխկախվածության մեջ են: Այս հանգամանքը հատկապես ակնառու է ազգերի ինքնորոշման սկզբունքի գործնական իրացման ժամանակ, որի ընթացքում անհրաժեշտաբար շփման եզրեր են առաջանում միջազգային իրավունքի մյուս սկզբունքների հետ: Դրանցից հատկապես կարելի է հիշատակել ազգերի և ժողովուրդների իրավահավասարության, ներքին գործերին չմիջամտելու, պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու, ինչպես նաև ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքները:

Ինքնորոշման իրավունքն իրացնելիս՝ առանց այս և միջազգային իրավունքի մյուս հիմնական սկզբունքները հաշվի առնելու հնարավոր չէ հավասարակշռել բոլոր ազգերի և ժողովուրդների կամ նրանց կողմից ձևավորված պետությունների իրավունքները և օրինական շահերը:

Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունք, ինչպես իրավաբանական գրականության, այնպես էլ միջազգային փաստաթղթերում սովորաբար օգտագործվում է «իրավահավասարություն» հասկացության հետ մեկտեղ: Օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրությունում նշվում է՝ «ազգերի միջև զարգացնել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի նկատմամբ հարգանքի վրա հիմնված բարեկամական հարաբերություններ...» (հոդվ.1, կետ 2): Այն, որ սույն նախադասության մեջ «իրավահավասարություն» ձևակերպումն ավելի առաջ է գտնվում, քան «ինքնորոշում» բառը, կարծում ենք, պատահական չէ: Ըստ երևույթին, Կանոնադրության հեղինակները դրանով ցանկացել են ընդգծել «ազգերի» ինքնիշխանության առաջնայնությունը, որի ճանաչման և երաշխավորման միջոցներից մեկն էլ նրանց հավասար իրավունքների և հնարավորությունների իրավաբանական ճանաչումն է:

Ազգերի իրավահավասարության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնադրության նշված դրույթը հետագայում զարգացում ապրեց նաև միջազգային այլ

փաստաթղթերում: Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագրում[1] ընդգծված է, որ «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք» (կետ 2) և «Ոչ բավարար քաղաքական, տնտեսական և սոցիալական պատրաստվածությունը կամ ոչ բավարար պատրաստվածությունը կրթության բնագավառում երբեք չպետք է օգտագործվի որպես պատճառ անկախության տրամադրումը ձգձգելու համար» (կետ 3): Նույն միտքը, սակայն, ավելի կոնկրետացված ձևով հայտնվում է նաև Սոցիալական առաջընթացի և զարգացման հռչակագրում:[2] Այդ փաստաթղթի 1-ին հոդվածում նշվում է. «բոլոր ժողովուրդները և մարդիկ, անկախ ռասայից, մաշկի գույնից, կրոնական դավանանքից, ազգությունից, էթնիկական ծագումից [...] իրավունք ունեն ապրել արժանապատիվ պայմաններում և ազատության պայմաններում և օգտվել սոցիալական առաջընթացի պտուղներից...»: Ինքնորոշման իրավունքը բոլորի համար հավասարապես ճանաչելու պարտավորությունն ամրագրված է նաև ժողովուրդների իրավունքների համընդհանուր հռչակագրում:

Վերջին հարյուրամյակի ընթացքում տեղի ունեցող զարգացումները վկայում են, որ ազգային ինքնիշխանությունն իրենից ներկայացնում է աստիճանաբար ընդարձակվող ազգերի (ժողովուրդների) իրավունքների համակցություն, որը նրանց թույլ է տալիս պահպանել իրենց գոյությունը, ազգային ինքնությունը և ապահովել իրենց զարգացման համար բարենպաստ պայմաններ:[3]

Նկատի ունենալով, որ ՄԱԿ-ի՝ որպես միջպետական կազմակերպության, սուբյեկտ կարող են լինել միայն պետությունները, դժվար չէ ենթադրել, որ նրա Կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում հիշատակվող «ազգերի միջև» ձևակերպումը վերաբերում է առաջին հերթին պետություններին, քանզի անգլերենում և որոշ այլ լեզուներում «nation» եզրույթը օգտագործվում է նաև «պետություն» իմաստով:

Կարծում ենք, ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում օգտագործվող «ազգերի միջև» ձևակերպումը պետք է ընկալել բազմիմաստ: Այն կարելի է վերագրել և պետություններին, և ազգերին՝ որպես ինքնորոշման առաջնային սուբյեկտներ: Նման եզրահանգման հիմքում ընկած է նշված հոդվածում «ժողովուրդներ» եզրույթն օգտագործելու փաստը: Կանոնադրու-

---

[1] Տես Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ի 1514(XV) բանաձևը:
[2] Տես Գլխավոր ասամբլեայի 1969թ. դեկտեմբերի 11-ի 2542 (XXIV) բանաձևը:
[3] Տես Курс международного права в семи томах. М., 1989, с. 179

թյան 1-ին հոդվածի 2-րդ կետի համատեքստում «ազգեր» և «ժողովուրդներ» հասկացությունները կարծես թե հանդես են գալիս որպես հոմանիշներ:

Ժամանակակից միջազգային իրավունքում գոյություն ունեցող ազգերի և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքն այն նախահիմքն է, որը կանխորոշում է պետությունների իրավահավասարության սկզբունքը և բովանդակությունը:

Միջազգային իրավունքի հաջորդ հիմնական սկզբունքը, որին առնչվում է ազգերի ինքնորոշման իրավունքը, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքն է: Սովորաբար ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին անդրադառնում են արդեն միջազգայնորեն ճանաչված պետությունների հարաբերությունների մասին խոսելիս, սակայն, եթե ելնենք այն կանխադրույթից, որ ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում հիշատակվող «ազգեր»-ը և «ժողովուրդներ»-ն իրենց միջազգային հարաբերություններում պարտավոր են ղեկավարվել միմյանց իրավահավասարությունը և ինքնիշխանությունը հարգելու սկզբունքով, ապա ինքստինքյան ենթադրվում է, որ միջազգային իրավունքի այս ինքնուրույն ակտորների հարաբերությունների համար անկյունաքարային նշանակություն ունի նաև միմյանց ներքին գործերին չմիջամտելու պարտավորությունը:

Ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը կարևորվում է նաև մեկ այլ առումով: Ազգերի և ժողովուրդների իրավասուբյեկտությունը միջազգային իրավական բովանդակություն ունի, նրանց ինքնորոշման և ազատ կամահայտնության իրավունքը համընդհանուր ճանաչում ունեցող ժողովրդավարական արժեք է, ուստի նրանց կամքի վրա բռնության կամ ներգործության ցանկացած արտաքին փորձ պետք է որակվի որպես միջազգային իրավունքի ողջ համակարգի դեմ ուղղված ոտնձգություն: Ժողովուրդներին խաղաղության ոգով դաստիարակելու մասին հռչակագրում նշվում է, որ «Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել բոլոր ժողովուրդների ինքնորոշման, անկախության, ինքնիշխանության իրավունքը [...] ներառյալ զարգացման սեփական ճանապարհի սահմանումը, առանց նրանց ներքին գործերին որևէ միջամտության» (կետ 5): Այս պահանջն ամրագրված է նաև Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում (1970թ.): Դրանում ասվում է, որ «[...] բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության, որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը [...]:

Ասվածը բոլորովին չի նշանակում, թե վերջիններս լիովին ազատ են իրենց գործողություններում: Միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի պահանջները տարածվում են նաև ինքնորոշվող ազգերի և ժողովուրդների վրա: Այս հանգամանքն իրավաբանորեն ձևակերպված է: Ինքնորոշման իրավունքի ձևերը և մեթոդները, դրա իրականացման հիմքերը և պայմանները, ինչպես նաև միջազգային համակարգի մյուս ակտորների իրավունքները և պարտականությունները բավականին հստակ են ամրագրված միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում ունիվերսալ հռչակագրերում և պայմանագրերում, ՄԱԿ-ի և տարածաշրջանային կազմակերպությունների փաստաթղթերում: Դրանք օգնում են ավելի հստակորեն պատկերացնել ինքնորոշվող ազգի և ժողովրդի ոչ միայն իրավունքների, այլ նաև պարտականությունների շրջանակը: Նման հստակեցումը հնարավորություն է տալիս նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել արդյունավետությամբ որոշել, թե ինքնորոշվող ազգը երբ է դուրս գալիս իր իրավազորության շրջանակից և վերածվում իրավախախտի: XX դարի վերջին սկսված և XXI դարում շարունակություն ունեցող ինքնորոշման համար պայքարը հատկապես Բալկաններում ցույց տվեցին, որ երբեմն ինքնորոշման իրավունքի իրականացումն օրինական պայքարից վերածվում է զինված ընդհարման և ուղեկցվում ոչ մարդասիրական բնույթի բավականին դաժանությամբ դրսևորվող աղետներով: Ընդ որում, նման իրավիճակներում, որպես կանոն, պայքարի անօրինական միջոցների են դիմում ընդհարման բոլոր կողմերը:

Ինքնորոշման իրավունքի իրականացման հետևանքով ծագող բացասական հետևանքները վերացնելու և հարցը խաղաղ, քաղաքական բանակցությունների ճանապարհով լուծելու համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում միջամտել ինքնորոշման գործընթացին՝ դրա ամենատարբեր փուլերում: Միջազգային իրավունքը նման միջամտության հնարավորություն նախատեսում է, ընդ որում, այդպիսի միջամտության մեծ լիազորությամբ է օժտված հատկապես ՄԱԿ-ը, իսկ պետություններն այս հարցում այնքան իրավունք կարող են ունենալ, որքան իրենց ՄԱԿ-ը կլիազորի:[4]

Ներկա ժամանակաշրջանում ինքնորոշման իրավունքի վրա արտաքին ազդեցության ձևերը և մեթոդները բավականին նենգափոխվել են, դրանք երբեմն իրականացվում են անուղղակի միջամտության ձևով, ընդ որում, դրանք հատկապես կապվում են ինքնորոշման իրավունքի ներքին կողմի հետ, երբ ազգը կամ ժողովուրդը խնդիր ունի իր կյանքը բարելավելու նպատակով

---

[4] Տես ԼՂՀ-ի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822(1993), 853(1993), 874(1993) և 884(1993) բանաձևերը:

փոփոխել իր պետության քաղաքական ռեժիմը: Մեր օրերում նման երևույթները նույնիսկ ծեռք են բերել հատուկ անվանում՝ «գունավոր հեղափոխություն», որն ասոցացվում է արտաքին միջամտության հետ:

Բոլոր դեպքերում, ինքնորոշման իրավունքի վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային իրավական փաստաթղթերի առատությունը և դրանց բազմակողմանիությունը հնարավորություն են տալիս թերևս իրավունքի տեսության հարթության վրա պարզելու, թե այս կամ այն կոնկրետ դեպքում առկա է ինքնորոշման իրավունքի նկատմամբ արտաքին միջամտություն, թե՝ ոչ: Այլ խնդիր է, որ ինքնորոշման իրավունքի իրականացումը կարող է հանգեցնել այնպիսի քաոսային վիճակի, երբ իրավունքի կիրառումը՝ առանց քաղաքական բնույթի լրացուցիչ որոշումների, ուղղակի կդառնա անհնարին:

Ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը սերտ կապի մեջ է գտնվում նաև պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքի հետ:

Ինքնորոշման իրավունքի սկզբունքի առնչությամբ հաճախ է կարծիք հայտնվել, որ այն հակասում է պետության տարածքային ամբողջականության սկզբունքին: Նման հայտարարությամբ սովորաբար պետությունների ներկայացուցիչները հանդես են գալիս, երբ նրանց երկրի կազմում գտնվող որևէ ազգային խումբ փորձում է իրականացնել իր ինքնորոշման իրավունքը: Սովորաբար նման հայտարարություններն արվում են քաղաքական կամ պետական գործիչների կողմից, սակայն ԽՍՀՄ-ի և նախկին Հարավսլավիայի փլուզման հետևանքով սկսված անկախության գործընթացը որևէ կերպ կասեցնելու նպատակով արված տարբեր հայտարարություններում և դատողություններում նույնիսկ փորձ արվեց ինքնորոշման իրավունքը, որը jus cogens նորմ է, ստորադասել իրավաբանական ուժի տեսանկյունից մեկ այլ նույնաբնույթ սկզբունքի՝ պետության տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքին: Ավելին, նման հայտարարությամբ հանդես եկավ նույնիսկ ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին: Նրա կարծիքով՝ «Բացարձակ և բացառիկ ինքնիշխանության ժամանակներն անցել են, նրա տեսական կոնցեպցիան երբեք չի հաստատվել իրական կյանքով... Եթե յուրաքանչյուր էթնիկ, կրոնական կամ լեզվական խումբ կձգտի պետականության, ապա տրոհմանը սահման չի լինի: Իսկ համընդհանուր խաղաղությունը, անվտանգությունը, տնտեսական բարեկեցությունը կդառնան ավելի դժվարությամբ ծեռք բերվող նպատակ».[5] Ըստ էության, Բուտրոս Ղալին ժխտում էր

---

[5] Տես Повестка дня для мира ООН. Нью-Йорк, 1992г, с. 9-10.

ինքնորոշման իրավունքը կամ առնվազն փորձում էր տեսականորեն հիմնավորել այդ սկզբունքի կիրառման նպատակահարմարության հարցը:

Ազգերի ինքնորոշման իրավունքը ժխտելու փորձ է նաև, երբ կարծիք է հայտնվում, որ «չի կարելի ժողովրդի ինքնորոշման իրավունքն իրականացնել մեկ այլ ժողովրդի հաշվին, քանի որ դա հակասում է միջազգային իրավունքի դրույթներին»:[6] Կարծում ենք ակնհայտ է, որ նման դիրքորոշումը զուրկ է որևէ իրավական հիմքից:

Բնական է, որ ցանկացած պետության համար իր կազմում գտնվող ազգի և ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացումը չի կարող ցավագին չընկալվել, հատկապես երբ դրա արդյունքում նրանից տարածք է անջատվում: Ավելին, հաճախ պետությունները դժկամությամբ են վերաբերում, երբ ընդամենը խոսք է գնում դրանց կազմում գտնվող ազգին ավելի բարձր կարգավիճակ շնորհելու մասին: Շատ բնական է նաև, որ Սերբիան, Ադրբեջանը, Մոլդովան կամ Վրաստանը պետք է դժգոհեն իրենց կազմում գտնվող ազգերի և ժողովուրդների ինքնորոշման ձգտումից, սակայն խնդիրն այն է, թե միջազգային իրավունքի տեսանկյունից այդ դժգոհությունն իրավաբանորեն հիմնավոր է, թե՞ ոչ:

Անընդունելի է նաև գրականության մեջ հանդիպող հետևյալ բնույթի դատողությունը: «Երբ մենք խոսում ենք տարածքային ամբողջականության սկզբունքի մասին, ապա պետք է նկատի ունենանք, որ տարածքային ամբողջականության սկզբունքը ենթադրում է խաղաղ, պետականության ոչ բռնի փոփոխություն, այդ թվում և պետության կազմից պետության դուրս գալը»:[7]

Ինքնորոշման համար մղվող ազգային ազատագրական պայքարի ողջ պատմությունը վկայում է, որ քիչ են այն դեպքերը, երբ ազգերն արդյունքի են հասել խաղաղ, քաղաքական պայքարի միջոցով: Դրա ապացույցը նաև Բալկաններում և նախկին ԽՍՀՄ տարածքում այսօր ընթացող ինքնորոշման համար դաժան պայքարն է: Սվածի օրինակ կարող է ծառայել նաև ԽՍՀՄ-ի տրոհման գործընթացը: Ճիշտ է, ԽՍՀՄ-ը վերջնականորեն կազմալուծվեց հանրաքվեի արդյունքների հիման վրա, այդուհանդերձ, այդ փաստն ավելի շատ կոչված էր մեր ժամանակների խոշորագույն կայսրության տրոհմանը քաղաքակիրթ տեսք հաղորդել: ԽՍՀՄ-ի տրոհման համար էական դերակատարություն ունեցավ այն, որ նախկին խորհրդային հանրապետություններն

---

[6] Л. А. Стешенко. Многонациональная Россия: государственно-правовое развитие X-XXI вв. Издъво Норма, М., 2002, с. 154.

[7] Նույ տեղում՝ էջ 154:

ակնհայտ անհնազանդություն էին դրսևորում «կենտրոնի» հանդեպ, որը հաճախ վերածվում էր արյունալի բախումների:[8]

Կարծում ենք, ազգերի ինքնորոշումը և պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքների միջև որևէ հակասություն չկա: Իսկ նման հակասություն արծանագրելու յուրաքանչյուր փորձ միայն աղավաղում է նշված երկու սկզբունքների ինչպես էությունը, այնպես էլ բովանդակությունը:

Ինչ խոսք, ազգի ինքնորոշման իրականացումը կարող է նաև հանգեցնել պետության տարածքային փոփոխության: Սակայն նման փոփոխությունը՝ որպես միջազգային իրավունքի jus cogens սկզբունքի իրացման արդյունք, լիովին իրավազոր գործողություն է, որովհետև այդ իրավունքի իրականացումը տեղի է ունենում առանձին վերցրած պետության ներսում, նրա ազգային իրավունքի սուբյեկտի կողմից: Տարածքային այդպիսի փոփոխությունը պետության կազմում գտնվող ազգի ինքնորոշման գործընթացի արդյունք է, որի ժամանակ բացակայում է արտաքին քաղաքական, տնտեսական կամ ռազմական բնույթի ցանկացած ներգործություն:

Ազգի ինքնորոշման իրավունքը հարգելու սկզբունքն անմիջական պարտավորություն է նախատեսում այն պետության համար, որի տարածքում է գտնվում ինքնորոշվող ազգը: Մինչդեռ կոնկրետ պետության տարածքային ամբողջականությունը հարգելու պարտականությունը դրված է մյուս պետությունների վրա: Պետություններն ըստ այս սկզբունքի, պետք է ձեռնպահ մնան ցանկացած այնպիսի արտաքին միջամտությունից կամ ներգործությունից, որը կհանգեցնի միջազգային իրավունքի որևէ այլ սուբյեկտի տարածքային փոփոխությանը:

Ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում հնարավոր է, որ պետության ներսում գտնվեն անջատողական տրամադրություն ունեցող քաղաքական ուժեր, որոնք կփորձեն պետությունը տրոհել: Սակայն եթե նման պայքարի սուբյեկտն իր պատմական հայրենիքում բնակվող համապատասխան իրավազորությամբ օժտված ազգը կամ ժողովուրդը չէ, այլ քաղաքական ընդդիմություն կազմող մարդկանց խումբ, որը ձգտում է մասնատել երկիրը, ապա, բնականաբար, այս պարագայում խոսք չի կարող լինել ինքնորոշման իրավունքի մասին:

Այս հարցի հետ կապված հետաքրքիր ձևակերպում է տեղ գտել Վիեննայի՝ գործողությունների հռչակագիրը և ծրագիրը (1993թ.) անվանումը

---

[8] Դրա ապացույցը Բաքվում և Թբիլիսիում տեղի ունեցած զինված ընդհարումներն էին խորհրդային զորքերի և տեղաբնակների միջև:

կրող փաստաթղթում: Դրանում կրկին անգամ ճանաչելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և ընդունելով, որ «մարդիկ Միացյալ ազգերի խարտիային համապատասխան իրավունք ունեն ցանկացած օրինական միջոց գործադրել, որպեսզի իրացնեն ինքնորոշման իրենց անօտարելի իրավունքը», միաժամանակ նշում է, որ «[...] դա չպետք է մեկնաբանվի որպես ցանկացած գործողության արդարացում, որը, ելնելով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքից, կարող է ինքնիշխան և անկախ պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը տրոհել կամ թուլացնել ամբողջությամբ կամ մասնակիորեն [...]»: Մեկ այլ փաստաթղթում նույնպես, որը կրում է Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագիր անվանումը, նշվում է, որ ցանկացած փորձ, որն ուղղված է երկրի ազգային միասնությունը և տարածքային ամբողջականությունը մասնակիորեն կամ լիովին կործանելուն, անհամատեղելի է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների և սկզբունքների հետ (կետ 6):

Նշված հղումները վկայում են, որ ինքնորոշման իրավունքը երբեք չպետք է օգտագործվի որպես առիթ, որպես պատրվակ այս կամ այն պետության դեմ թշնամական գործողություններ իրականացնելու համար:

Հարկ է նշել, որ միջազգային իրավունքի այս երկու հիմնական սկզբունքների միջև արհեստական կերպով հակասություն փնտրելուն որոշակի առումով նպաստեց նաև այն, որ 1975թ. Հելսինկիի ԵԱՀԽ-ի եզրափակիչ ակտում «Պետությունների տարածքային անձեռնմխելիություն» ձևակերպումը փոխարինվեց «Պետությունների տարածքային ամբողջություն» ձևակերպմամբ:[9] Եթե «տարածքային անձեռնմխելիություն» հասկացությունը ենթադրում էր միայն արտաքին ներգործության մերժում, ապա «տարածքային ամբողջություն» հասկացությունը կարող է սխալ մեկնաբանության արդյունքով ընկալվել նաև որպես «ցանկացած ինքնորոշման մերժում, որը կհանգեցնի պետության տարածքային ամբողջության տրոհմանը»:

Կարծում ենք, պետք է լիովին համաձայնել այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ «ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որևէ տեղից դուրս գալու միասնական իրավունքը չէ, դա զարգացման իրավունքն է, երկխոսության, խոսելու իրավունքն է»:[10] Իսկապես, ինքնորոշման իրավունքն

---

[9] Տես Հանուն խաղաղության, անվտանգության և համագործակցության: Հելսինկիում կայացած ԵԱՀԽ արդյունքների շուրջ: 1975թ. հուլիսի 30-ից օգոստոսի 1-ը: Երևան, 1975, էջ 23:

[10] Л. А. Стешенко. Многонациональная Россия: государственно-правовое развитие X-XXI вв. Изд-во Норма, М., 2002, с. 175.

անընդհատ գործող դինամիկ իրավունք է, որը կարող է inter alia դրսևորվել միևնույն պետության ներսում կարգավիճակը փոփոխելու կամ այլ պետության կազմի մեջ մտնելու ձևով, իսկ այդպիսի խնդիր անհնարին է իրականացնել առանց բանակցելու, առանց երկխոսության մեջ մտնելու:

Ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը որոշակի փոխհարաբերակցության մեջ է գտնվում նաև ուժ չկիրառելու սկզբունքի հետ:

Ուժ չկիրառելու սկզբունքի բարեխիղճ կատարումը միջազգային խաղաղության և անվտանգության հիմնական երաշխիքներից մեկն է: Որպես կանոն, այս սկզբունքը կիրառվում է պետությունների փոխհարաբերություններում, սակայն միջազգային իրավունքն այս սկզբունքը հավասարապես տարածվում է նաև ինքնորոշվող ազգի և ժողովրդի վրա, քանզի, որպես բռնությամբ զուգակցվող գործողություն համարվում է արգելված վարքագիծ:

Միաժամանակ, ըստ միջազգային իրավունքի՝ ազգային ազատագրական պայքարը և դրան աջակցելը, թեկուզ այդ պայքարն իրականացվում է զենքի գործադրմամբ, համարվում է իրավազոր գործողություն: Ըստ միջազգային իրավունքի՝ ինքնորոշվող ազգն իր պայքարը կարող է իրականացնել նաև ուժային մեթոդների գործադրմամբ, իսկ նրա նկատմամբ ուժ գործադրելը հանդիսանում է իրավաբանորեն արգելված գործողություն:

Ինքնորոշվող ազգի և ժողովրդի նկատմամբ ուժի կիրառման արգելումն ամրագրված է միջազգային բազմաթիվ փաստաթղթերում: Օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Անկախ երկրներում բնիկ ժողովրդի և ցեղային կյանք վարող ժողովուրդների մասին № 169 (1989թ.) կոնվենցիայում նշվում է, որ ուժի գործադրման ոչ մի ձև կամ հարկադրանք չպետք է օգտագործվի ի խախտումն մարդու իրավունքների և համապատասխան ժողովուրդների հիմնական ազատությունների (հոդվ. 3, կետ 2): Իսկ Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագրում նշվում է, որ «Ցանկացած ռազմական գործողություն կամ որևէ տիպի ռեպրեսիվ բնույթի միջոց՝ ուղղված կախյալ ժողովուրդների դեմ, պետք է դադարեցվի, որպեսզի նրանց հնարավորություն տրվի լիարժեք անկախության իրենց իրավունքն իրականացնեն խաղաղության և ազատության պայմաններում [...]» (կետ 4): Նման բնույթի նորմատիվ դրույթներ կան նաև Պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության և նրանց անկախությունը և ինքնիշխանությունը պաշտպանելու մասին հռչակագրում: Դրանում ասվում է, որ բոլոր պետությունները պետք է հարգեն ժողովուրդների և ազգերի ինքնորոշման և անկախության իրավունքը, և այդ

իրավունքը պետք է իրականացվի ազատ և առանց որևէ արտաքին ճնշման [...]
Կարելի է բերել նաև բազմաթիվ այլ օրինակներ: Դրանց բոլորի համար ընդհանուրն այն է, որ ինքնորոշման իրավունքը մերժելը կամ դրանց խոչընդոտելը՝ այդ փաստաթղթերի համաձայն, ոչ միայն ազգի և ժողովրդի, այլ նաև մարդու իրավունքների խախտում է:

Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը գտնվում է միջազգային իրավունքի պաշտպանության ներքո: Ինչպես նշվում է Գաղութային և օտարերկրյա տիրապետության և ռասիստական ռեժիմի դեմ պայքարող Կոմբատանտների իրավական վիճակի հիմնական սկզբունքները փաստաթղթում՝ գաղութային և օտարերկրյա տիրապետության և ռասիստական ռեժիմի լծի ներքո գտնվող ժողովուրդների պայքարն ինքնորոշման և անկախության իր իրավունքն իրականացնելու համար, օրինական է և լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին: Այդ փաստաթղթում նաև նշվում է, որ գաղութային և ռասիստական ռեժիմի և օտարերկրյա տիրապետության դեմ ցանկացած պայքարի ճնշումն անհամատեղելի է ՄԱԿ-ի կանոնադրության, Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հռչակագրի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հետ [...] և վտանգ է ներկայացնում միջազգային խաղաղության և անվտանգության համար:

Ազգերի ինքնորոշման իրավունքի նկատմամբ տարբեր բնույթի, այդ թվում՝ նաև ռազմական խոչընդոտների կիրառումն ի վերջո հանգեցրեց միջազգային հանցագործության նոր հանցակազմի ձևավորմանը, որը միջազգային իրավունքի գիտության մեջ հայտնի է գաղութատիրություն և նեոգաղութատիրություն անվանմամբ: Ինչպես նշվում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2621(XXV) 1970թ. բանաձևում՝ «գաղութատիրությունն իր բոլոր ձևերով հանդիսանում է միջազգային հանցագործություն, որը խախտում է ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային իրավունքը, Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագրի դրույթները»:

Չնայած ներկա պատմական փուլում գաղութացված ազգերի և ժողովուրդների մեծ մասն ինքնորոշվել և ձեռք է բերել անկախություն, այդուհանդերձ, ինքնորոշման իրավունքն անընդհատ գործող իրավունք է և դրա իրականացումն ապահովելը պետությունների միջազգային ընտանիքի ընդհանուր գործն է, նրանց կոլեկտիվ պարտականությունը: